ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 2/72-L «08» 01 2025թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2024 թ. ապրիլի 3-ի թիվ 15/1 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 6-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնները համալրելու նպատակով 2025թ. փետրվարի 7-12-ը ընկած ժամանակահատվածում՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

ՀՀ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԱՄԲԻՈՆ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ
1.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոն	1
2.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոն	1
3.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Ընդհանուր աշխարհագրության ամբիոն	1
4.	Աստվածաբանության ֆակուլտետ	Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոն	1
5.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն	1
6.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոն	1
7.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Անգլիական բանասիրության ամբիոն	1
8.	Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն	1

9.	Կենսաբանության ֆակուլտետ	էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն	1
10.	Կենսաբանության ֆակուլտետ	Գենետիկայի և բջջաբանության ամբիոն	1
11.	Պատմության ֆակուլտետ	Համաշխարհային պատմության ամբիոն	1
12.	Պատմության ֆակուլտետ	Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն	1
13.	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ	Ֆինանսահաշվային ամբիոն	1
14.	Ֆարմացիայի ինստիտուտ	Կենսաբժշկագիտության ամբիոն	1
15.	Քաղաքացիական պաշտպանության ամբիոն	Քաղաքացիական պաշտպանության ամբիոն	1
16.	Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն	Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն	1

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին, գիտական քարտուղարին և կրթական ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ